ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/38

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2850-2020 գրությամբ «ՀՍՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 26.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/586-2020 գրության հիման, վրա 27.02.2020թ. թիվ 26/26-1/2850-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՀՍՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՀՍՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՀՍՍ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/38 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/586-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀՍՍ» ՍՊԸ-ի միջև 20.09.2019թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» գնման պայմանագրի (հետայսու նաև՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի լուծել է «ԲՄԱՊՁԲ-4/6-3» գնման պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/38 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀՍՍ» ՍՊԸ-ի միջև 20.09.2019թ. կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և

հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 19.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԲՄԱՊՁԲ-4/6-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2850-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության 26.02.2020թ. թիվ ՊՆ/1/1/586-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀՍՍ» ՍՊԸ-ի միջև 20.09.2019թ. կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված վառելիքաքսուքային նյութերը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 4 344 100 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 20 հատ «Շրջադարձի ցուցիչի ընդհատիչ՝ РС-950П-3726010», 30 հատ «Ցնցամեղմիչ՝ 53-2905006», 30 հատ «Կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով՝ А29.03.000», 20 հատ «Շրջադարձի հոդակապ՝ 452-2304060-01», 20 հատ

«Վառոցքի անջատիչ հավաքական՝ 3160-3704005», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 1202.3704-05», 100 հատ «Բարձր լարման հաղորդալարերի լրակազմ՝ 3102-3707050», 30 հատ «Ջրի մղիչ հավաքական՝ 4022-1307010(-10)», 99 հատ «Բաշխիչի կափարիչ՝ Հ119-3706500», 10 հատ «Գլանների իրանի գլխիկ՝ 421.1003010-10» և 100 հատ «Փոկ՝ 406.1308020-10» ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. 4-րդ եռամսյակը, բայց 2019 թվականի նոյեմբերի 30-ից ոչ ուշ:

ՀՀ պաշտպանության նախարարությունն Ընկերությանն ուղղված 11.02.2020թ. թիվ ԴՎԱ/474 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀՍՍ» ՍՊԸ-ի միջև 20.09.2019թ. կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 30.11.2019թ. մատակարարել 30 հատ «Ցնցամեղմիչ՝ 53-2905006», 20 հատ «Շրջադարձի հոդակապ՝ 452-2304060-01», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 3160-3704005», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 1202.3704-05», սակայն չի մատակարարել և 30 հատ «Կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով՝ A29.03.000», որից 21 հատը չի մատակարարել:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի լուծել է թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 19.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-4/6-3» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի,</u>

Այսպիսով՝ «ՀՍՍ» ՍՊԸ-ն իր և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 20.09.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում, այն է՝ 2019թ. 4-րդ եռամսյակը, բայց 2020 թվականի նոյմեբերի 30-ից ոչ ուշ, ՀՀ պաշտպանության նախարարությանը 20 հատ «Շրջադարձի ցուցիչի ընդհատիչ՝ PC-950Π-3726010», 30 հատ «Ցնցամեղմիչ՝ 53-2905006», 30 հատ «Կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով՝ A29.03.000», 20 հատ «Շրջադարձի հոդակապ՝ 452-2304060-01», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 3160-3704005», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 1202.3704-05», 100 հատ «Բարձր լարման հաղորդալարերի լրակազմ՝ 3102-3707050», 30 հատ «Ջրի մղիչ հավաքական՝ 4022-1307010(-10)», 99 հատ «Բաշխիչի կափարիչ՝ Հ119-3706500», 10 հատ «Գլանների իրանի գլխիկ՝ 421.1003010-10» և 100 հատ «Փոկ՝ 406.1308020-10» ապրանքները մատակարարելու պարտականությունը: Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցման համաձայն՝ Ընկերությունը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունն ամբողջ ծավալով և պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 10.02.2020թ., չի մատակարարել 30 հատ «Ցնցամեղմիչ՝ 53-2905006», 20 հատ «Շրջադարձի հոդակապ՝ 452-2304060-01», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 3160-3704005», 20 հատ «Վառոցքի անջատիչ հավաքական՝ 1202.3704-05» ապրանքներն ամբողջությամբ, իսկ 30 հատ «Կոմպրեսոր հավաքական հեղուկային հովացումով՝ A29.03.000» տեսակի ապրանքից չի մատակարարել 21 հատը ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Այսինքն՝

Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2850-2020 գրությամբ «ՀՍՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՀՍՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**